ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Կրթություն և գործունեություն»

Սոցիալ- Բարեգործական կրթամշակութայի հիմնադրամ

Հետազոտական աշխատանք

Խումբ՝ Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ Սովորողների ճանաչողական պահանջմունքները. պատասխանատվություն, հետաքրքրություն

Հետազոտող՝ Անժելա Աղաբեկյան

ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի Ս. Խանզադյանի անվան համար 6 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

Ղեկավար՝ Արամ Մուսախանյան

Գորիս 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԸ..... 4

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ 6

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՄԱՆ և
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 18

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այն սերունդը,որ մենք դաստիարակում ենք այսօր,ապրում և գործում է այնպիսի ժամանակաշրջանում,որ պետք է նա օժտված լինի նոր, համակողմանիորեն և ներդաշնակորեն զարգացած մարդուն հատուկ գծերով ու որակներով, լինի բարձրակիրթ, լայն,հարուստ,խոր,կայուն գիտելիքների,կարողությունների ու հմտությունների տեր անձնավորություն: Գիտության, տեխնիկայի սրընթաց զարգացումը մեծ ազդեցություն է ունենում ուսումնական գործունեության վրա:Ուսման նկատմամբ աշակերտի ունեցած վերաբերմունքը ամենից առաջ

վերաբերմունքը ամենից առաջ պայմանավորված է համապատասխան ճանաչողական պահանջմունքների առկայությամբ,որոնց բացակայության դեպքում աշակերտները չեն աշխատում իրենց ուժերի չափով, չեն կարողանում ակտիվ և իքնուրույն ուսումնական գործունեություն ծավալել,որը դառնում է ուսման մեջ ետ մնալու,անառաջադիմության գլխավոր պատճառը:Ահա թե ինչու յուրաքանչյուր աշակերտի մեջ ուսումնական ճանաչողական պահանջմունքներ ձևավորելու,ուսման նկատմամբ դրական վերաբերմունք դաստիարակելու հարցը ներկայումս դարձել է կենսական հարցերից մեկը:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԸ

Աշակերտի մեջ ճանաչողական պահանջմունքների զարգացումը կբարձրացնի ուսուցման արդյունավետությունը, նրա դաստիարակչական դերը: Թե ինչպես հաղթահարել աշակերտների որոշ մասի անտարբերությունն ուսման և մասամբ՝ այս կամ այն առարկայի նկատմամբ,ինչպես կազմակերպել ուսուցման պրոցեսը,որպեսզի աշակերտը ոչ միայն ընկալի հաղորդվող գիտելիքները,այլև սովորի մտածել,ոչ միայն մտապահի ու վերարտադրի փաստերը,կանոնները,բանաձևերը,այլև իմաստավորի դրանք,ձեռք բերի ուսումնասիրվող երևույթների մեջ ինքնուրույնաբար կողմնորոշվելու կարողություններ,մտավոր աշխատանքի հմտություններ,որոնք կնպաստեն աշակերտների ճանաչողական գործունեության ակտիվացնելուն,ուսուցման արդյունավետությունը բարձրացնելուն:

Իմանալու, ճանաչելու պահանջմունքը մարդու այն բնական հատկությունն է,որն արտահայտում է մարդու ուղղվածությունը դեպի արտաքին աշխարհը,շրջապատում կողմնորոշվելու նրա կարիքը,գոյության և կենսագործունեության անհրաժեշտ պայմանը:Մարդու ճանաչողական պահանջմունքներն ունեն բազմաբարդ բնույթ և՛ սոցալիական,և՛հոգեբանական,և՛մանկավարժական:

Ճանաչողական պահանջմունքներն աշակերտի ուսումնական,ճանաչողական գործունեության շարժիչ ուժերն են,դրանք խթանում են աշակերտի հոգեկան գործունեությունը,համախմբում նրանց մտավոր ուժերը ճանաչողական խնդիրներ լուծելու նպատակով,բարձրացնում աշակերտի հոգեկանի գործունեության մակարդակը,ազդում հոգեկան պրոցեսների բովանդակության,դրանց ընթացքի,հուզական ու կամային կողմերի վրա:Ճանաչողական պահանջմունքները կատարում են թե՛ ինտելեկտուալ,թե՛ հուզական և թե՛ կամային ֆունկցիաներ:Ինտելեկտուալ ֆունկցիան արտահայտվում է հետևյալում. ճանաչել ուսումնասիրվող առարկայի,երևույթի էությունը,նրա գլխավոր հատկանիշը տարբերել ոչ էական,երկրորդական հատկանիշից,ճանաչել տվյալ երևույթն առաջ բերող պատճառը, տեսնել երևույթների ներքին փոխկապվածությունը:Ճանաչողական պահանջմունքների ինտելեկտուալ

էությունը պայմանավորում է նրանց հուզական և կամային բնույթը:Ուսուցման ընթացքում բավարարվում են աշակերտի իմանալու պահանջները:Աշակերտը լուծում է ճանաչողական բազմապիսի խնդիրներ,հայտնագործում է իր համար նորանոր շատ բաներ, կատարում է ինքնուրույն ստեղծագործական աշխատանք ,որը սովորաբար ուղեկցվում է հուզական հոգեվիճակներով:Աշակերտն իր ճանաչողական պահանջմունքների բավարարման ճանապարհին հանդիպում է դժվարությունների,խոչընդոտների,որոշակի հակասությունների,որոնց հաղթահարումը պահանջում է կամային ջանքեր ու ճիգեր, կամքի մեծ ուժ,եռանդ:Երբ խնդիր է դրվում զարգացնել սովորողների ճանաչողական պահանջմունքները,ապա անհրաժեշտ է առաջին հերթին հստակորեն սահմանազատել պահանջմունքները, սահմանել դրանց զարգացման մակարդակներն ու որոշել,թե դրանցից որն է առաջնահերթը այսօրվա դասին և զարգացման ինչպիսի հեռանկար պետք է ունենա:Բազմազան են սովորողերի ճանաչողական պահանջմունքների ձևավորման ուղիներն ու միջոցները:Այդ ուղիներից մեկը կապված է ուսման նկատմամբ գիտակցական,պատասխանատու վերաբերմունք, պարտքի զգացում և գիտելիքների հասարակական կարևորության գիտակցություն դաստիարակելու հետ:

Պատասխանատվություն ուսման նկատմամբ :

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Գաղտնիք չէ, որ մեր աշակերտների որոշ մասը անտարբեր է դեպի այս կամ այն առարկան, մի հանգամանք,որն արտահայտվում է նրանց ցածր առաջադիմության մեջ:Պատասխանատվությունը դիտվում է իբրև անձնավորության բարոյահոգեբանական բարդ հատկանիշներից մեկը,որը կապված է մարդու թե՛ մտավոր,թե՛ հուզական և թե՛ կամային ակտիվության հետ:Ուսման նկատմամբ աշակերտի ունեցած պատասխանատվության հիմքում ընկած է աշակերտական պարտականությունների,աշակերտի հասարակական պարտքի և պատվի գիտակցումը:Պարտականությունների և հասարակական պարտքի գիտակցումը շատ աշակերտների մեջ գերաճում է պարտքի զգացումի:Այդ տեսակետից պատասխանատվությունը խորապես վերապրած պարտքի զգացումն է:Սակայն վերջինս չի սպառում պատասխանատվության բովանդակությունը:Կան աշակերտներ,որոնք գիտակցում են իրենց ուսումնական պարտականությունները,օժտված են պարտքի զգացումով,բայց ոչ միշտ են բարեխղճորեն կատարում ստացած առաջադրանքները և տնային աշխատանքները ։ Պատասխանատվությունը անհրաժեշտաբար ենթադրում է պարտականությունները կատարելու ձգտումը, կամային պատրաստակամություն՝ ուժ, եռանդ, տոկունություն,համառություն և այլն, հաղթահարելու այն դժվարությունները,որոնք կհանդիպեն ուսումնական առաջադրանքներ կատարելիս:Աշակերտի պատասխանատվությունն իր ուսումնական պարտականությունների հանդեպ այնպիսի հատկություն է,որը հիմնվում է բարոյական որոշակի կենսափորձի վրա,իսկ վերջինս արտահայտվում է բոլոր տեսակի տնային առաջադրանքների ինքնուրույն և ժամանակին կատարելու,սիստեմատիկաբար ուսումնական աշխատանքով զբաղվելու սովորույթի,ինքնահսկողության,իր գիտելիքների ծավալը և որակը ակտիվորեն բարձրացնելու ձգտման, կեղծ ընկերականության զանազան ձևերի՝ արտագրելու, ծածկագրերից օգտվելու,հուշելու և այլն,նկատմամբ ցուցաբերած անհաշտվողական վերաբերմունքի մեջ:Ուսման նկատմամբ պատասխանատվություն ունենալու համար աշակերտը պետք է ցուցաբերի պարտականությունների կատարման

նկատմամբ պատասխանատու վերաբերմունք,անհանգստության դրսևորում ,ձգտում,որքան կարելի է լավ կատարել իր պարտականությունները և բավականություն ստանալ դրանից:Պետք է ունենա դժվարությունները հաղթահարելու ձգտում, ինքնուրույնություն պարտականությունների կատարման մեջ,հավասարաչափ պատասխանատվություն բոլոր տեսակի պարտականությունների նկատմամբ:

Աշակերտի մի մասը անտարբեր վերաբերմունք են ցուցաբերում ուսումնական այս կամ այն առարկային:Ընդունակությունների զարգացման տարբեր մակարդակը ուսուցման տարբեր փուլերում հանգեցնում է այն բանին,որ նրանց մի մասի համար ուսումնական գործունեությունը կապված է լինում լուրջ դժվարությունների հետ,պահանջում է ֆիզիկական և մտավոր ուժերի մեծ լարում:Սեփական ոչ լիարժեքության զգացումը ծնում է ճնշվածություն, կաշկանդվածություն, մտավախություն,անվստահություն իր ուժերի նկատմամբ: Աշակերտների մի այլ մասի համար ուսուցումը չի ներկայացնում առանձնակի դժվարություն:ՈՒսումնական նյութի հեշտ զարգացումը նրանց չի ընտելացնում սիստեմատիկ,համառ,համբերատար աշխատանքի և 4-րդ դասարանից սկսած,երբ փոխվում է աշակերտի ուսումնական գործունեության բնույթը,երբ մի շարք աշակերտների սիստեմատիկ դասընթացի ուսումնասիրությունը պահանջում է լուրջ, տնական աշխատանք, ապա այդ մասն իրեն դրսևորում է որպես անընդունակ կամային երկարատև ջանքերի գործադրման:Դա նմանապես իջեցնում է նրանց հաջողության մակարդակը և ծնում է անտարբեր վերաբերմունք դեպի ուսումը կամ դեպի որևէ առարկա:Ուսման նկատմամբ ունեցած վերաբերմունքի վրա մեծ ազդեցություն է ունենում աշակերտների միջև ստեղծված փոխհարաբերությունների բնույթը:Եվ այդ փոխհարաբերությունները պետք է լինեն այնպիսին,որ դասարաններում ստեղծվեն առողջ կոլեկտիվներ և այնպիսի հասարակական կարծիք,որն ուղղված լինի անբարեխիղճ, ուսումնական աշխատանքում թերացող աշակերտների դեմ:Շատ հաճախ լայնորեն տարածված հուշումները,միմյանցից արտագրելը, ծածկագրերից օգտվելը հանգեցնում է նրան,որ որոշ աշակերտների մեջ թույլ է զարգանում պարտքի զգացումն ու

պատասխանատվությունը ուսման նկատմամբ, ինչպես նաև որոշ ուսուցիչների ձևական մոտեցումը աշակերտների գիտելիքների գնահատման գործում նույնպես իջեցնում է պահանջկոտությունը և թուլացնում պատասխանատվությունը ուսումնական աշխատանքի նկատմամբ:Ուսումնական աշխատանքի համար պետք է կարողանալ զարգացնել անհրաժեշտ որոշ կարողություններ ու հմտություններ:Պետք է կարողանալ աշակերտին ընտելացնել ինքնուրույն, սիստեմատիկ աշխատանքի, որպեսզի կարողանա արդյունավետ ձևով կատարել տնային հանձնարարությունները :Եվ աշակերտի մեջ կարողանալ դաստիարակել ինքնահսկելու կարողություն,զարգացնել մտավոր աշխատանքի հմտությունները,աշակերտների դիտունակությունը, ուշադրությունը, հիշողությունը, երևակայությունը, տրամաբանական մտածողությունը, կամքը, հետաքրքրասիրությունը և այլն: Աշակերտների բարեհաջող ուսումնական գործունեության համար առաջին հերթին աշակերտի մեջ պետք է դաստիարակել ուսումնական գործունեության ճիշտ, լայն, ճանաչողական, հասարակական նշանակություն ունեցող դրդապատճառները:Պետք է աշակերտի մեջ ձևավորել անհրաժեշտ աշխատանքային հմտություններ և համակարգված աշխատանք, զարգացնել ճանաչողական ընդունակությունները և ստեղծագործական ուժերը, ապահովել աշակերտների նորմալ, ուսումնական աշխատանքի համար բարենպաստ հուզական վիճակ, որ հնարավորություն տա բավարարել նրանց հետաքրքրություններն ու պահանջմունքները, ստեղծել առողջ փոխհարաբերություններ դասարանի աշակերտների և ուսուցիչների միջև:Յուրաքանչյուր դասի ընթացքում ուսուցիչը պետք է անդրադարձ կատարի հարցերի միջոցով, որպեսզի ստուգի,թե աշակերտները ինչ սովորեցին դասի ընթացքում: Ուսման նկատմամբ պատասխանատվություն դաստիարակելու նպատակով պետք է աշակերտներին գիտակցել տալ,որ ուսումը ոչ միայն առանձին աշակերտի,այլև ամբողջ դասարանի ընդհանուր գործն է, նրանց համատեղ աշխատանքն է բոլոր դասերի ժամանակ, որ դասարանը աշխատող, գործող աշակերտների խումբ է, որտեղ բոլորը զբաղված են ընդհանուր գործով, իսկ ուսուցիչը հանդես է գալիս որպես

ուղղորդող:Ուսուցչի գլխավոր գործունեությունը աշակերտի ճանաչողական գործունեության խթանումն է, կազմակերպումն ու կառավարումը, նրանց դաստիարակությունը:Ուսուցիչը ուղղություն է տալիս դասարանի հետաքրքրություններին,որոնք համապատասխանում են յուրաքանչյուր աշակերտի հետաքրքրություններին:Հետևապես աշակերտն իր գիտելիքների համար պատասխանատու է ոչ միայն ուսուցչի,այլև դասընկերների առջև:Նրա վերաբերմունքը ուսման նկատմամբ մշտապես վերահսկվում է և գնահատվում դասընկերների կողմից, ուստի նրա հաջողությունը կամ անհաջողությունը ուսման մեջ դառնում է ողջ դասարանի կենսական գործը:Ամենից առաջ դասի ընթացքում է ծնվում պատասխանատվության զգացումը ուումնական աշխատանքի համար: Աշակերտների պատասխանատվությունը ուսումնական աշխատանքի նկատմամբ հատկապես խթանվում է այն դասերին ,որտեղ ուսուցիչը ոչ թե հաղորդում է ամբողջ ծրագրային նյութը պատրաստի վիճակում, այլ բացատրում է միայն հանգուցային հարցերը: Նման դեպքերում ուսուցիչը ոչ թե պարզապես վերարտադրում է դասագրքի նյութը, այլ լրացնում է, հաղորդում է նորը, հետաքրքիր տեղեկություններով հարստացնում է իր աշակերտների հոգևոր աշխարհը, միաժամանակ նրանց առաջարկում է ինքնուրույնաբար ուսումնաիրել այն հարցերը, որոնք չեն պարզաբանվել դասին:Ուսուցչի բացատրության և աշակերտի ինքնուրույն աշխատանքի զուգակցումը դասի ժամանակ, բարձրացնում է աշակերտների ակտիվությունը, հետաքրքրասիրությունը, կամային պատրաստականությունը:Ուսուցչի նախազգուշացումը այն մասին,որ ինքը շարադրելու է ոչ ամբողջ նյութը, և որոշ հարցեր պետք է ուսումնասիրեն աշակերտները, նրանց մեջ առաջացնում է պատասխանատվություն: Ստեղծագործաբար աշխատող ուսուցիչը ոչ միայն կազմակերպում է աշակերտի ակտիվությունն ու ինքնուրույնությունը դասերի ժամանակ,այլև զգալիորեն փոխում է աշակերտի վերաբերմունքը ուսումնական աշխատանքի նկատմամբ: Ուսման նկատմամբ աշակերտների մեջ պատասխանատվություն դաստիարակելու համակարգում մեծ նշանակություն ունի համակարգված ուսումնական աշխատանք կատարելու կայուն սովորույթի ձևավորումը:Ուսումնական գործունեությունը պահանջում է խելամտորեն աշխատանք, հաղթահարել դժվարություններ, դրսևորել

կազմակերպվածություն:Ամեն մի չավարտված կամ անհաջող կատարված աշխատանք պետք է ավարտվի կամ վերակատարվի. դա պետք է դառնա յուրաքանչյուր աշակերտի համոզմունքը: Եվ միաժամանակ անհրաժեշտ է աշակերտի մեջ զարգացնել ինքնուրույնաբար աշխատելու, դատելու, ինքնուրույնաբար դժվարությունները հաղթահարելու կարողություններ:Որոշ աշակերտներ չեն տիրապետում մտավոր աշխատանքի հմտություններին, աշխատում են ոչ արդյունավետ, և դա բացասաբար է անդրադառնում նրանց առաջադիմության վրա: Ուստի աշակերտների մի մասը անպատասխանատվություն է ցուցաբերում տնային աշխատանքների կատարման գործում:Մի դեպքում բացակայում է անհրաժեշտ հսկողությունը ծնողների կողմից, մյուս դեպքում չի բավականացնում ուսուցչի ներկայությունը:Նաև որոշ աշակերտների մեջ բացակայում են ինքնուրույնաբար աշխատելու համար անհրաժեշտ հմտություններ:Ուսուցիչը պետք է չհանձնարարի միապաղաղ, անհետաքրքիր, երբեմն էլ անհասկանալի տնային աշխատանքներ:Ուստի յուրաքանչյուր ուսուցիչ պետք է հասկանալի դարձնի առաջադրանքի նպատակը և այդ նպատակով ոգևորի նրանց,այդ ժամանակ աշակերտը կարող է հրապուրված կատարել անհետաքրքիր, բայց անհրաժեշտ աշխատանք:Աշակերտների տնային աշխատանքը կազմակերպելիս պետք է հաշվի առնել որոշ հանգամանքներ:Մեծ նշանակություն ունի տնային առաջադրանքների անհատական բնույթը, դա խրախուսում է աշակերտների ինքնուրույնությունը աշխատանքում:Ծնողների, ուսուցիչների և դասընկերների հսկողությունը տնային աշխատանքի նկատմամբ,ինքնուրույն աշխատանքի մեթոդների կատարելագործումը դասերի ժամանակ և դասերից դուրս, պարտքի զգացումը դասընկերների հանդեպ, հասարակական առողջ կարծիքի ստեղծումը դասարանում աշակերտների մեջ դաստիարակում է համակարգված աշխատանք կատարել:Դա դառնում է սիստեմատիկաբար պարապելու սովորույթ և այն վերածվում է այն կայուն համոզմունքին ,որ աշակերտի գլխավոր պարտականությունը, նրա հայրենասիրական պարտքը լավ սովորելն է:Շատ կարևոր է նաև հատուկ ուշադրություն դարձնել աշակերտի մեջ ինքնահսկման կարողություն դաստիարակելու հարցի վրա, որպեսզի յուրաքանչյուր աշակերտ ցանկացած առաջադրանքը կատարելուց առաջ իր

համար պարզի աշխատանքի նպատակը, այն կատարելու եղանակը, ուղին, միջոցները և կատարելուց հետո անպայման ստուգի այն:Հուշումները և արտագրելը որոշ գիտակից աշակերտների մեջ ծնում են անտարբեր վերաբերմունք ուսման նկատմամբ և հաճախ ուսուցչի թույլտվությունը թուլացնում է աշակերտների պատասխանատվությունը:Մի անգամ աշակերտների հետ զրույցից պարզվեց, որ նրանք ընկերոջը հուշելը, արտագրել թույլ տալը և այլն համարում են բնական, դրանում չեն տեսնում իրենց արժանապատվությունը նսեմացնող որևէ բան:Դեռ ավելին,նրանցից շատերը համոզված էին,որ դա իսկական ընկերություն է,և մեղադրում են այն աշակերտներին,ովքեր չեն հուշում կամ թույլ չեն տալիս արտագրել,նրանց համարում են վատ ընկերներ:Ինչքան էլ փորձես համոզել,որ ընկերոջը օգնելու ցանկությունը,իհարկե,բարի ցանկություն է,սակայն հուշելով ոչ թե օգնում ,այլ վնասում են տվյալ աշակերտին,միևնույն է, շատ աշակերտներ մտածում են, որ ընկերոջը թողնում են վատ դրության մեջ:Իսկ աշակերտների մի մասը խորհեց քննարկվող հարցի շուրջ և ոմանց մոտ առաջացավ այն միտքը,որ պետք է վերացնեն հուշումները,արտագրելու վերաբերյալ ունեցած իրենց տեսակետը,որպեսզի տվյալ աշակերտի մեջ ձևավորվի ճանաչողական կարևոր արժեքներից մեկը՝ պատասխանատվությունը: Որոշ դեպքերում աշակերտների ուսման մեջ ունեցած անհաջողությունը կապված է լինում նրանց ուժերի նկատմամբ ունեցած անվստահության հետ:Երկչոտ, անվստահ աշակերտների նկատմամբ ուսուցիչը պետք է ցուցաբերի հոգատարություն, ժամանակին օգնության հասնի, որպեսզի ուսման մեջ նրանք ետ չմնան: Փորձը ցույց է տվել, որ միայն ուսուցչի հոգատար վերաբերմունքի շնորհիվ այդպիսի աշակերտների մոտ կվերանա անտարբեր վերաբերմունքը այս կամ այն առարկայի նկատմամբ:Եվ ուսման նկատմամբ հետաքրքրությունը ծնվում է ուսուցման ազդեցությամբ և պահպանվում է այն ուսուցչի խելացի , հոգատար աշխատանքի շնորհիվ:

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՄԱՆ և ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Աշակերտի ճանաչողական հետաքրքրությունները հիմք են ծառայում ստեղծագործական գործունեության հակումների, համապատասխան ընդունակությունների զարգացման համար: Աշակերտի ընդունակությունները զարգանում են գործունեության մեջ,որը պետք է լինի ակտիվ, համակի աշակերտի միտքը, զգացումները, կամքը, այն պետք է լինի ցանկալի, սիրելի, առլեցուն բերկրանքով, խոհերով, որոնումներով:Եթե երեխան չունի սովորելու ցանկություն, եթե նրա մեջ չեն զարգացել գիտելիքներ ձեռք բերելու պահանջմունքներ,նա հետաքրքիր ոչինչ չի տեսնում և գտնում ուսումնական պարապմունքներում, ապա ուսուցիչը պետք է իր ջանասեր աշխատանքով յուրաքանչյուր ետ մնացող աշակերտի մեջ առաջացնի սովորելու ցանկություն և միայն նման աշխատանքի շնորհիվ ոչ միայն կհաղթահարի տվյալ աշակերտի անառաջադիմությունը,այլև արմատապես կփոխվի նրա վերաբերմունքը դեպի ուսումը:Ճանաչողական հետաքրքրությունները նպաստում են աշակերտի կամային ջանքերի ուժեղացմանը, ուսման մեջ հանդիպող դժվարությունների հաղթահարմանը:Հետաքրքրությունների ազդեցությամբ զարգանում է աշակերտների մտավոր ակտիվությունը:Ներկա ժամանակաշրջանում աշակերտները իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները որոնում են համացանցում և գտնելու դեպքում մեծ բավականություն են ստանում:Համացանցի օգտագործումը ընդլայնում է դասի սամանները՝ առաջարկելով ուսուցման ու դասավանդման նոր հնարավորություններ, որի շնորհիվ ուսուցումը դառնում է ավելի հրապուրիչ ու հետաքրքիր :Ներկայումս համացանցի շնորհիվ շատացել են կրթական գործընթացը բարելավելու և առավել արդյունավետ դարձնելու հնարավորությունները:Հատկապես օգտակար են ,,օնլայն,, բառարանները, գրադարանները, ինչպես նաև կարելի է գտնել այնպիսի էջեր,որոնք պարունակում են գիտական նյութեր, ուուցանող խաղեր, հետաքրքիր վարժություններ:Եվ այդ ամենը աշակերտներին ավելի է հրապուրում, նրանց մեջ արթնացնում է կենդանի հետաքրքրություն դեպի ուսումը, ամրացնում է հավատը իրենց ուժերի նկատմամբ, իհարկե, ուսուցչի

անմիջական մասնակցությամբ, եթե ուսուցիչը ուսուցման մեջ չմտցնի հուզականություն,խոր համոզվածություն, չցուցաբերի սեր դեպի իր ավանդած առարկան և իր աշակերտները:Աշակերտների ուսումնական հետաքրքրությունները ձևավորելու գործում ոչ պակաս կարևոր նշանակություն ունի ուսուցման պրոցեսի մեջ գրավչության տարրեր մտցնելը, վերջիններս գրավում են ուշադրությունը, բարձրացնում են ակտիվությունը, զարգացնում են հետաքրքրասիրությունը անգամ այն աշակերտների, ովքեր անտարբեր են ուսման նկատմամբ:Այդպիսի պայմաններում հաղթահարվում է աշակերտների պասիվությունը, առաջանում է ցանկություն ակտիվորեն մասնակցելու դասարանում տարվող ամբողջ ուսումնական աշխատանքին:Իսկ ո՞րն է հետաքրքրության գաղտնիքը:Յուրաքանչյուր ուսուցիչ երազում է այն մասին, որ իր դասերին ուսումը հետաքրքիր լինի աշակերտնրի համար:Իսկ ինչպե՞ս հետաքրքիր դարձնել դասը:Արդյոք բոլոր դասերը կարող են հետաքրքիր լինել:Որո՞նք են հետաքրքրության ակունքները:Դասն ընթանում է հետաքրքիր, նշանակում է,որ ուսմանը, մտածողությանը ուղեկցում են աշակերտի ոգևորության զգացումը, համոզմունքը, զարմանքը բացահայտող ճշմարտության առաջ, իր մտավոր կարողությունների զգացումը, ստեղծագործական ուրախությունը,հպարտությունը մարդու նկատմամբ:Կարծում եմ,որ յուրաքանչյուր ուսուցիչ եթե հույսը դնի միայն,տեսանելի,նկատելի ազդակների վրա,որոնք հետաքրքրություն են արթնացնում ուսման,դասերի նկատմամբ,ապա երբեք չի դաստիարակի իսկական մտավոր աշխատասիրություն:Պետք է ուսուցիչը ձգտի այն բանին,որ աշակերտներն իրենք բացահայտեն հետաքրքրության աղբյուրները,որ այդ բացահայտման ժամանակ նրանք զգան իրենց սեփական աշխատանքը,հաջողությունը:Ինքնըստինքյան դա հետաքրքրության կարևորագույն աղբյուրներից մեկն է:Առանց ակտիվ մտավոր աշխատանքի աներևակայելի են աշակերտների թե՛ հետաքրքրությունը,թե՛ ուշադրությունը:Առաջին շարժառիթը ուսուցչի մոտեցումն է դասի ընթացքում բացատրվող նյութին,այն նյութին , որ բացատրվում է դասի ընթացքում, այն փաստերին,որոնք ենթարկվում են վերլուծության:Ես միշտ աշխատում եմ աշակերտներին ինչ-որ նոր բան բացահայտել այնպես,որ զարմանքի զգացում արթնացնի:Որքան մեծ է լինում այդ զգացումը աշակերտների մեջ,այնքան ավելի շատ են ցանկանում

իմանալ,իմաստավորել,հասկանալ:Հետաքրքրության աղբյուրը թե՛ գիտելիքների կիրառման մեջ,թե՛ գիտելիքների մտավոր կերպով տիրապետելու զգացումն ապրելու մեջ:Դաստիարակչական շատ կարևոր խնդիր եմ տեսնում այն բանում,որ մշտապես պահպանվի,խորացվի հայտնագործող դառնալու աշակերտի ցանկությունը,խորացվի նրա այդ ցանկությունը աշխատանքի հատուկ մեթոդներով:Գիտելիքի ուժի զգացումը,որը վեհացնում է մարդուն, դժվար է գտնել գիտելիքի նատմամբ հետաքրքրության առավել փայլուն խթան:Որքան կարևոր է,որ գիտելիքներին տիրապետելու պրոցեսը ուժասպառ չանի աշակերտին,նրան չհասցնի հոգնածության և ամեն ինչի նկատմամբ անտարբեր վիճակի,այլ ուրախությամբ համակի նրա ամբողջ էությունը:Գիտելիքի զգացումն աշակերտի մեջ ամենից ավելի ուժեղ է լինում,իհարկե,այն ժամանակ,երբ նա է ինչ-որ բան հետազոտում,հայտնագործում,երբ նա ընկալում է կոնկրետ փաստեր,երևույթներ:Սակայն դատողությունների հանգեցնողը,ճանաչողական հետաքրքրություն արթնացնողը ուսուցչի որոնողական-բանավիճային մեթոդն է:Հետաքրքրություն հարուցվում է ուսուցչի կողմից ղեկավարվող,բայց ոչ հարկադրվող հակադիր կարծիքների բախումից,հակասությունների քննարկումից բանավեճերից:Հետաքրքրության դաստիարակության գործում հիմնական դերը պատկանում է ուսուցչի կողմից սովորողների գործունեության կազմակերպման եղանակին:Ճանաչողական հետաքրքրությունը ինքնուրույն կերպով գիտելիքների յուրացման հզոր շարժիչ ուժն է:Ի՞նչ է արդյոք մտցնում ճանաչողական հետաքրքրությունը,երեխայի, դեռահասպատանու կյանքում ,զարգացման և ուսումնական գործունեության մեջ:Բավակա՞ն չէ,արդյոք, դաստիարակել պարտքի զգացում, պատասխանատվություն, սովորելու պարտականության գիտակցում:Պարտքի գիտակցումը և զգացողությունը կատարելապես անհրաժեշտ են բոլորին:Նա, ով սովորում է առանց հետաքրքրության, նյութը սերտում է դասի կամ քննության համար,առանց հիշողության մեջ երկարատև պահպանելու նկատառման, պատասխանելուց անմիջապես հետո, կարճատև ժամանակամիջոցի համար սերտածը մոռացվում է:Ովքեր հետաքրքրությամբ են սովորում, գիտելիքները երկարատև են պահպանվում, նրանք մտադրվում են կիրառելու այն նաև հետագայում:Հետևապես հետաքրքրությամբ յուրացվածը երկար է հիշվում և հեշտությամբ է վերարտադրվում:Ինչպես նաև

հետաքրքրությունը շարժիչ ուժ է ոչ միայն առարկայի ընկալման,այլև մտածողության զարգացման համար:Այսպես, ի՞նչ է հարկավոր դաստիարակել ուսման նկատմամբ՝ հետաքրքրությու՞ն, թե՞ պատասխանատու վերաբերմունք:Ո՛չ հետաքրքրություն, ո՛չ պատասխանատվություն,այլ սերտ կապ , մեկի և մյուսի միասնությունը:Պարտքի զգացման և պատասխանատվության առկայությամբ գործի նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի դեպքում աշակերտի աշխատանքը կատարվում է բարձրորակ ձևով:Գործի համար անհրաժեշտ է նաև այդ, բայց դա անբավարար է:Պարտքի զգացումը ուսումնական աշխատանքը դարձնում են համառ, սիստեմատիկ, բայց մեծ մասամբ հոգնեցուցիչ և դժվար:Իմացական հետաքրքրությունը պարտքի զգացումը զուգակցում է ճանաչման բերկրանքի և այն ուժի հետ, որն աշխատանքին սեր և զգացմունքայնություն է տալիս, մյուս կողմից պարտքի զգացումը և պատասխանատու վերաբերմունքը հետաքրքրությանն ավելացնում են մեծ թափ, կայունություն, հաստատունություն, մշտականություն: Զգտելով աշխատանքը գործնականորեն օգտագործել ուսման մեջ դժվարությունների հանդիպող երեխաների և դեռահասների մտավոր դաստիարակության նպատակով, մենք նրանց ներգրավում ենք այնպիսի աշխատանքի մեջ, որը կապված է բարդ պրակտիկ կարողությունների և հմտությունների տիրապետման հետ:Այդ աշխատանքի բնորոշ առանձնահատկությունը նրա առանձին փուլերի և գործողությունների միջև եղած կախումն է, այն, որ այդ աշխատանքը պահանջում է մեծ ուշադրություն, պատասխանատվություն,կենտրոնացվածություն, խոհեմություն:Եվ աշխատանքը զարգացնում է բանականությունը, սովորեցնում է մտածել տրամաբանորեն, հետևողականորեն,խորանալ այն կախման մեջ, որ կա առանձին փաստերի և երևույթների միջև, երևույթներ, որոնք անմատչելի են անմիջական դիտման համար:Դանդաղ քառսային մտածողություն ունեցող աշակերտներին բարդ, խելացի և պատասխանատու աշխատանքի մեջ ներգրավելը, նրանց աշխատանքային գործունեության տևական դիտումները օգնում են ավելի լավ տեսնել մտածողության ձևավորման ուղիները:Եթե սովորողն ուսման մեջ հանդիպում է դժվարությունների, ապա դրանց ամենագլխավոր պատճառը թաքնված է հարաբերությունների և փոխադարձ կապվածությունը տեսնելու

անկարողության մեջ։Իսկ այդ կապվածությունը կարելի է տեսնել աշխատանքային գործունեության մեջ ,որտեղ սովորողը պետք է լինի խիստ ուշադիր և պատասխանատու։Պատասխանատվությունը և ուշադրությունը կառավարելու համար պետք է լավ ճանաչել երեխայի հոգեկանը, նրա տարիքային առանձնահատկությունները։Սովորողը պետք է զբաղվի ընթերցանությամբ, ընթերցի հետաքրքիր գրքեր,որպեսզի ուսումնական նյութի ընկալման պրոցեսում ակտիվ լինի միտքը։Ընթերցանությամբ նախապատրաստված ուշադրությունը մտավոր աշխատանքը հեշտացնելու ամենագլխավոր պայմաններից մեկն է։Ուսուցիչը պետք է այնպես անի,որ աշակերտների մեջ ստեղծի հուզական ոգևորություն, մտավոր ոգեշնչման ներքին վիճակ ։ Հետաքրքրությունը դեպի առարկան և աշակերտների ուշադրությունը մեծանում են զննականության միջոցներով,որոնք խթանում են մտածողությանը։Զննական պարագաների կիրառումը պահանջում է գիտամանկավարժական մեծ պատրաստվածություն,դեռահասի, սովորողի, պատանու հոգեբանության իմացում։Հարկավոր է ,որ աշակերտը միաժամանակ տեսնի, լսի,վերապրի, մտածի։Զննողականությունը մի ուժ է, որը զարգացնում է ուշադրությունը, մտածողությունը, հուզական երանգ է հաղորդում իմացությանը։ Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար,այլև այսօր համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը։Աշակերտի մեջ պատասխանատվությունը, հետաքրքրությունը կարելի է զարգացնել ժամանակակից տարբեր հնարների և մեթոդների միջոցով։Հարց ու պատասխանը,նյութը վերհիշելը, վարժանքները,ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար։Աշակերտի հետաքրքրասիրությունը կարելի է ակտիվացնել նաև ճիշտ կազմակերպված արտադասարանային և արտադպրոցական միջոցառումների միջոցով։Աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են նաև սոցիալական ցանցերը։Որպեսզի կրթության գործընթացը հետաքրքիր և արդյունավետ լինի պետք է ժամանակակից հնարների և մեթոդների միջոցով կարողանալ գրավել աշակերտների ուշադրությունը, կարողանալ աշակերտի մեջ զարգացնել մտածողության հմտությունները և ուսուցման արդյունավետ մոտեցում ցուցաբերել,պետք է ուսումնական նյութը մատուցել խառ,որի դեպքում աշակերտի

գիտելիքը ավելի մնայուն է: Միաժամանակ պետքէ իմանալ, որ ոչ բոլոր թեմաները կարող են ուսուցանել խառը մոտեցմամբ:

Արդյունավետ ուսուցման յոթ մոտեցումներն են՝

1.Մտաբերում

2.Նյութի սփռում ժամանակի մեջ

3.Խառը ուսուցում

4.Մանրամասնում

5.Օրինակներով ուսուցում

6.Պատկերի տեքստի համադրում

7Մետաիմացություն

Ուսուցման գործընթացում մենք հաճախ կարևորում ենք գիտելիքը, բայց պարզվում է,որ սովորելու չափանիշը իմացածը արտահայտելն է՝ մտաբերելը: Շատ կարևոր է նյութին հատկացնել երկար ժամանակ, որովհետև կարևոր թեմաները կարճ ժամանակում ավելի արագ են մոռացվում, քան երկար ժամանակում սովորածը,պարտադիր է տեքստի,խոսքի ուղեկցումը պատկերներով: Եվ շատ կարևոր է այդ թեմաներին անընդհատ անդրադառնալ և նոր բաներ սովորեցնելիս մանրամասնել ,առաջադրանքներ տալիս այնպիսի օրինակներ տրվեն, որտեղ հարցի պատասխանի մի մասը կա կամ ներառված են խնդրի լուծման որոշ քայլեր: Նաև ուսուցման մեջ շատ մեծ դեր ունի այն հանգամանքը, թե որքանով են աշակերտները տեղյակ իրենց իմացածից և չիմացածից:Հետևաբար յուրաքանչյուր սովորող պետք է իմանա հետևյալ հարցերը՝

1. Որտե՞ղ եմ ես:

2.Որտե՞ղ պիտի լինեի:

3.Ինչպե՞ս հասնեմ այնտեղ, որտեղ պիտի լինեի:

Ուսուցչի պատասխանատվության չափաբաժինը հնարավորություն է տալիս պլանավորելու դասը:

1. Նոր նյութի բացատրում՝ ուսուցիչն է անում:

2.Ուղղորդված ուսուցում՝ ուսուցիչն ու աշակերտները համատեղ են անում:

3.Համագործակցային աշխատանք՝ աշակերտները միասին են անում:

4.Ինքնուրույն աշխատանք՝ աշակերտն ինքնուրույն է անում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նյութի ուսումնասիրությունից եկա այն համոզման,որ աշակերտների ճանաչողական պահանջմունքների ձևավորման պրոցեսի արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է,որ ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմքում դնել զարգացնող ուսուցման գաղափարը:Խելացիորեն կազմակերպել, պլանավորել, ղեկավարել,հսկել,հաշվառել և գնահատել աշակերտների ճանաչողական պահանջմունքների ձևավորման նուրբ և բարդ պրոցեսը:Պարտքի զգացումը, պատասխանատվությունը և հետաքրքրությունը կապված են մեկը մյուսի հետ, և միայն սերտ կապի շնորհիվ կարելի է աշակերտի մեջ դաստիարակել հետաքրքրություն և պատասխանատու վերաբերմունք:Միայն պարտքի և հետաքրքրության միասնությունն են մարդուն բարձրացնում հասարակության վերաբերմունքի բարձրագույն աստիճանին: Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու,թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.«Մանկավարժություն»-գրախոսներ՝ Տուլայի Լ. Ն. Տոլստոյի անվան մանկավարժության և հոգեբանության ամբիոնի անդամներ

2.«Մանկավարժագիտություն»-Մանուկյան,

3. «Իմացական հետաքրքրության մասին»-Ն.Գ. Մորոզովա

4.Ուսուցման արդյունավետ հնարներ /Ս. Խաչատրյան-Երևան Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020